

Կորուստ դառողը հասած էր իր յոռեգոյն նպատակակետին: Այստեղ յիշենք գէթ հայ երաժշտութեան հանճարը՝ եղբրաբախտ Կոմիտաս Վրդ. որ զոհ գնաց մեր դարաւոր ոսոխի մահացու հարուածին, եւ որուն պատճառով փշրուեցաւ հայ ֆնարը եւ յաւերժ լռութեան մատնուեցաւ հայ տոհմիկ երգը:

Հակառակորդը մեզ կրնայ նաեւ բարոյագրկել: Բարոյապէս զրկուած ու ընկճուած ազգեր դատապարտուած կը մնան լնացման ու տեղֆայլի: Միտքով, հոգիով ու մարմնով առողջ ազգեր լոկ՝ կը յառաջդիմեն ու կը բարգաւաճին: Մեր բազմաչարչար ազգը կորստեան մատնուեցաւ ի ձեռս անօրինաց առաջին համաշխարհային պատերազմին: Հէֆ կրօնաւորին նման հազարաւոր եկեղեցական ու աշխարհական մտաւորականներ նահատակ եղան «կորուստ նիւթողի» դաւադրութեանց: Կորուստ նիւթողը իր չարագոյն ծրագրով, մամլակի սաստկութեամբ նախ ննջեց, ապա գերեց ու գրաւեց ողջ Արեւմտահայաստանը: Բնակչութեան հետ չէզոքացան նաեւ հայ բարբերը, սովորոյթները, միով բանիւ՝ ողջ առողջ մշակոյթը հայոց: Անկապտելի արժէքներ կապտուեցան, գանձեր կողոպտուեցան, գեղանի ու շնորհալի կոյսեր ու կիներ

առեւանգուեցան, պղծուեցան, իրի նման վաճառքի հանուեցան: Անդին, մանուկներ սրախոխողութեան, անձին մանկիկներ սուինահար ըլլալով արգանդախեղ եղան: Հակառակ բոլոր սրտակեղեք պաղատանքներուն ու օգնութեան լացակումած կանչերուն, ոչ ոք չխափանեց չարը, չկանխեց անոր յառաջխաղացումը եւ ընդարձակածաւալումը: Ան սանձարձակ ու արագասոյր արշաւեց, հրկիզեց ու աւերեց: Անոր երկսայրի սուրը փորձեց արմատաջնջել մեր պապենական սուրբ հաւատքը եւ մէկընդմիշտ հանգցնել առկայծ նրազը՝ վերջակէտ դնելով Հայ ազգի գոյութեան ու Հայկական Հարցին: Ոսոխին յարձակումները եղան ոչ միայն մշակութային, մարմնական, բարոյական, նիւթական, այլեւ՝ հոգեբանական: Դեռ եւս կան հայ ցեղասպանութեան վերապրողներ, որոնք զարմացական հայեացքով կը հային երկնից որոշումներուն եւ կը ֆրթմնջեն՝ շատ էր այսֆան չարիք, որուն փոխան հայր ըրած էր այնքան բարիք:

Մեզի կը մնայ ձայնակցիլ Նարեկայ վանքի սրբասնունդ վանականին եւ հանապազօրեայ մեր աղօթքին հետ միատեղ վերառաքել առ մեր Տէրը. «Կնքեա՛, կեցուցիչ, զկորուսչին ընթացմունս»:

ՋԵՆՈՒ ՔՀՆՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ